

ՀՀ տարածքային կառավարման և  
Ենթակառուցվածքների Նախարար  
Գնել Սանոսյանին

«Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ  
նախագահ Սուրեն Դեհերյանից

### Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Սանոսյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ տրամադրել մեզ հետաքրքրող տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Որքա՞ն է կազմել տարեկան բնակարանային շինարարության ծավալը յուրաքանչյուր մարզում՝ ըստ մակերեսի 2018-2023թթ. ընթացքում
2. Տարեկան քանի՞ բազմաբնակարան շենք է կառուցվել՝ քանի՞ բնակարանով և ի՞նչ մակերեսով յուրաքանչյուր մարզում 2018-2023թթ. ընթացքում
3. Որքա՞ն է կազմել բնակարանային շինարարության ծավալն՝ ըստ գումարի 2018-2023թթ. ընթացքում
4. Ներկայումս բնակարանաշինական ի՞նչ ծրագրեր են իրականացվում ՀՀ մարզերում:
5. Որքա՞ն է կազմում բնակարանային պահանջարկը յուրաքանչյուր մարզում

Ինչպես նաև խնդրում եմ ձեր միջնորդությունը, «բնակարանային շինարարության ազդեցությունը ՀՀ տարածքների համաչափ զարգացման վրա» թեմայով ձեր գլխավորած գերատեսչության որևէ կոմպետենտ ներկայացուցչի հետ հարցազրույց անցկացնելու համար: Խնդրում եմ սույն հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Խնդրում եմ Ձեր պատասխան-նամակում առցանց աղբյուր հիշատակելու դեպքում տրամադրել ոչ թե համապատասխան գերատեսչության կայքի հիմնական էջը, այլ մեզ հետաքրքրող տվյալների մասին էջը, քանի որ ոչ միշտ է, որ կայքի կառուցվածքը կամ որոնողական համակարգը մատչելի է անհրաժեշտ տեղեկատվությունը որոնելու համար:

Խնդրում եմ ծանուցումը ուղարկել [ampopmedia@gmail.com](mailto:ampopmedia@gmail.com) էլեհասցեին:

Կանխավ շնորհակալ եմ,  
Սուրեն Դեհերյան,  
«Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ նախագահ  
Ampop.am կայքի գլխավոր խմբագիր

